

Պատմական ակնարկ

1958-1989թթ. Արզնու № 4 առողջարանային գիշերօթիկ դպրոց

1989-2001թթ Բյուրեղավանի № 4 հանրակրթական գիշերօթիկ դպրոց

2001-2007օգոստոսի 1-ը Բյուրեղավանի որբ, ծնողական խնամքից զրկված թիվ 1 հատուկ դպրոց (ենթակայությունը Կոտայքի մարզպետարան)

2003թ. Պետական ոչ առևտրային կազմակերպություն

2007թ. սեպտեմբերի 1-ից «Բյուրեղավանի երեխաներ խնամքի և պաշտպանության

գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ (ենթակայությունը ՀՀ աշխատանքի և սոցիալական

հարցերի նախարարություն) «Բյուրեղավանի երեխաներ խնամքի և պաշտպանության

գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ը հանդիսանում է «Բյուրեղավանի որբ, ծնողական

խնամքից զրկված թիվ 1 հատուկ դպրոց» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը: Բյուրեղավանի № 4 հանրակրթական գիշերօթիկ դպրոցը սպասարկել է հանրապետության տարբեր մարզերի տոնգիլիտով և ռևմատիզմով հիվանդ երեխաների:

1989 թվականի անցումային տարիների հետ կապված հաստատությունը վերանվանվեց Բյուրեղավանի № 4 գիշերօթիկ հանրակրթական դպրոց, որտեղ սովորել են սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ: 2001 թվականին հաստատությունն վերանվանվել է № 1 հատուկ դպրոց:

2007 թվականի հուլիսի 26-ի № 890 ն ՀՀ կառավարության որոշման համաձայն դպրոցը վերանվանվեց «Բյուրեղավանի երեխաներ խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի :Դպրոցն աշխատում է շուրջօրյա ռեժիմով՝ ուսումնական մաս, դաստիարակչական մաս, գիշերային մաս: Դպրոցն ունեցել է կառավ արման խորհուրդ, որը ժամանակին իրականացել է օրենքներով հիմնադրի որոշումներով և դպրոցի կանոնադրությամբ բոլոր գործառույթները: Ժամանակին կազմվել և խորհրդի քննարկմանն են ներկայացվել դպրոցի հեռանկարային (եռամյա, քառամյա 2003-2007թթ) զարգացման ծրագրերը: Դպրոցի գործունեության առարկան և նպատակը կրթական բնույթի գործունեության իրականացումն է, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը՝ հատուկ և հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացման ապահովմամբ: 2004 թվականին աշակերտներ թիվը դպրոցում հսել է 130-ի, 2010 թվականին դպրոցում կա 92 աշակերտ:Դպրոցը համագործակցել է արտասահմանյան կազմակերպությունների հետ. 2002 թվականին «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրով վերանորոգվեց դպրոցի շենքը: Հովանավոր կազմակերպություններն էին “Better life” բարեգործական և “Frendly” առողջապահական կենտրոնի տնօրինությունը՝ Ազատյան եղբայրներ գլխավորությամբ:Այսօր հաստատությունն ունի ժամանակակից բոլոր անհրաժեշտ պայմանները, դպրոցում չկա ոչ մի հին գույք, բոլորը նոր են և համապատասխանում են նորօրյա ստանդարդներին: Երեխաները ապահովված են հագուստով կոշիկներով, դպրոցական կահույքով, անկողնային պարագաներով:Դպրոցի տնօրեններն ըստ ժամանակագրության

1957թ. փետրվարից Հ. Ռիզունյան

1958 թ. ապրիլից Ս. Ղալթախյան

1963 թ. սեպտեմբերից Հ. Գյուղուկյան

1964թ. փետրվարից Ա. Առաքելյան

1974թ. մայիսից Է. Հայրապետյան

1977թ. օգոստոսից Հ. Ազատյան

1991թ. սեպտեմբերից Ռ. Գրիգորյան

2001թ. ապրիլից Գ. Մարգարյան

{comments off}